https://doi.org/10.52027/18294685-ham2024.1

ՂԱԶԻՆՅԱՆ ՄՀԵՐ
Հայաստանի ազգային գրադարան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ-ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԴԻՏԱՆԿՅՈՒՆԻՑ

Բանալի բառեր՝ Հայաստանի ազգային գրադարան, Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարան, Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ, Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջ, պրակտիկա, նպատակ, խնդիր, գիտելիք, հմտություն, կարողություն։

Keywords: National Library of Armenia, Brusov State University, Ejmiatsin State College named after Vardges Hamazaspyan, Yerevan State Armenian-Greek College of Tourism, Service and Food Industry, internship, purpose, task, knowledge, skill, ability.

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել տարբեր ուսումնական հաստատությունների ուսանողների պրակտիկայի կազմակերպումը Հայաստանի ազգային գրադարանում (հետայսու՝ ՀԱԳ), ինչպես նաև արժևորել պրակտիկայի կարևորությունը ՀԱԳ-ուսումնական հաստատություններ փոխգործակցության ամրապնդման և տեսական-գիտելիք-գործնական կիրառություն շղթայի շարունակականության տեսանկյունից։ Խնդիր է դրվել դիտարկել նաև կրթություն-գրադարան առնչությունների տեսական, գործնական, մեթոդաբանական հիմքերի դիտարկումը, արժևորումը և այլն։

ՀԱԳ-ը հայկական տպագիր արտադրանքի խոշորագույն պահոցն է, ինչպես նաև ազգային գրադարանագիտության ու մատենագիտության կենտրոնը։ Իբրև գիտակրթական, մշակութային և տեղեկատվական հաստատություն, ստեղծում է հայ տպագիր մշակութային ժառանգության հավաքագրման, մշակման, պահպանման և տարածման անհրաժեշտ պայմանները։ Կատարում է բազմաթիվ գործառույթներ։ Ակտիվորեն գործում է նաև սոցիալական ցանցերում։ Ունի պաշտոնական կայք։ Համագործակցում է աշխարհի բազմաթիվ գրադարանների հետ։ Միջազգային գրքափոխանակության միջոցով հավաքածուները ամեն տարի համալրվում են համաշխարհային գրականության նմուշներով։ Համագործակցում է Հայաստանում հավատարմագրված դեսպանությունների, միջազգային կազմակերպությունների, հայկական սփյուռքի ներկայացուցչությունների հետ՝ նպաստելով հայկական տպագիր մշակութային ժառանգության աշխարհով մեկ տարածմանը։

ՀԱԳ-ի առաքելությունն է.

- Լինել երկրի առաջընթացի անբաժանելի մասը՝ տեղեկատվական քաղաքականության, մշակույթի, կրթության, գիտության և տնտեսության ոլորտներում,
- Լինել գիտելիքի տարածք՝ Հայաստանի հասարակության համար արժեք ստեղծող միջավայր,
- Լինել հաճախորդների պահանջմունքներին միտված հաստատություն,
- Լինել հանրահասանելի ազգային հաստատություն, նպաստել երկրի ինովացիոն քաղաքականության իրականացմանը, մրցակցային առավելությունների բարձրացմանը և գիտելիքահենք հասարակություն ձևավորելուն,
- Հանրահռչակել ազգային մշակութային ժառանգությունը, աջակցել մշակութային բովանդակության և ծառայությունների բազմազանությանը,
- Բարելավել իրավական և տեխնոլոգիական պայմանները՝ տեղեկատվությունն առավել մատչելի դարձնելու համար [Հայաստանի ազգային գրադարանի առաքելությունը]:

ՀԱԳ-ի առաքելությունը արժևորվում է նաև ազգային անվտանգության դիտանկյունից, քանզի ազգային անվտանգությունը կարելի է բաժանել մի շարք գլխավոր ոլորտների՝ ռազմավարական, ժողովրդագրական, տնտեսական (ֆինանսական, էներգետիկ և այլն), տեղեկատվական, սոցիալ-հոգեբանական, մշակութային, կրոնական, էկոլոգիական [Այվազյան, 2004, 9]:

Կրթահամակարգն անցել է բազմադարյա զարգացման պատմական ուղի. հիշյալ զարգացումը կրում է շարունակական բնույթ: Արդի ժամանակաշրջանում միջազգային կրթական համակարգերին հանահունչ ընթանալու տեսանկյունից կարևոր է նաև միջազգային համապատասխան կրթական չափորոշիչների կիրառումն ազգային կրթահամակարգում՝ զուգահեռաբար պահպանելով նաև ազգային կրթության կենսունակ ավանդույթները: Գիտակրթական հզոր ներուժը մշակութային, տնտեսական, ռազմական և այլ ոլորտների հետ համատեղ ցանկացած երկրի համար ունի ռազմավարական հույժ կարևոր նշանակություն:

Առհասարակ պրակտիկան կարելի է դիտարկել նաև ցկյանս ուսումնառության դիտանկյունից: Միջազգային պրակտիկայում ցկյանս ուսումնառությունը սահմանվում է որպես «կյանքի ընթացքում եղած ուսումնական բոլոր գործողությունների ամբողջություն, որը նպատակ ունի կատարելագործել գիտելիքը, հմտություններն ու կարողությունները՝ անձնական, քաղաքացիական, սոցիալական և (կամ) աշխատանքային հեռանկարների համար» [Հայեցակարգ Հայաստանի Հանրապետությունում ցկյանս ուսումնառության, 2009]: Պրակտիկան ուսումնական գործընթացի կարևոր փուլերից է: ՀԱԳ-ուսումնական հաստատություններ փոխգործակցության համար կարևոր նախադրյալ է նաև գրադարանի բազմաբնույթ գործառույթների շրջանակը: ՀԱԳ-ը կարելի է դիտարկել նաև որպես կրթական գործունեություն իրականացնող հաստատություն: Այսպես, ՀԱԳ-ի Գրատպության թանգարանը, ի շարս այլ գործառույթների, իրականացնում է նաև կրթական տարբեր ծրագրեր: ՀԱԳ-ում պահպանվում է ավելի քան 100 լեզվով գրականություն. սույն իրողությունը ևս նպաստավոր է կրթական գործընթացի կազմակերպման տեսանկյունից, քանզի ՀԱԳ-ի այցելուներ են նաև տարբեր ազգությունների ներկայացուցիչներ: ՀԱԳ-ը, պայմանավորված գործառույթների բազմազանությամբ, կարևորվում է նաև տարբեր մասնագիտությունների պրակտիկանտների տեսական գիտելիքը գործնականում կիրառելու դիտանկյունից: Կրթական գործընթացը հնարավոր չէ արդյունավետ կազմակերպել առանց գրադարանների: Ժամանակակից աշխարհում քաղաքակրթական կարևոր նվաճումներից է նաև առանց տարածաժամանակային խոչընդոտների գործող թվային գրադարանի կայացումը, որը նպաստում է նաև կրթության որակի բարձրացմանը:

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի պրակտիկանտները Հայաստանի ազգային գրադարանում

ՀԱԳ-ԲՈՒՀ-եր փոխգործակցության շրջանակում 2024 թ. փետրվարի 5-ից մինչև մարտի 14-ը ներառյալ՝ շաբաթական երկու անգամ պարբերականությամբ, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի միջմշակութային հաղորդակցության և քաղաքագիտության ֆակուլտետի համաշխարհային գրականության և քաղաքակրթությունների ամբիոնի 4-րդ կուրսի ուսանողներ Գևորգ Խուդավերդյանը, Էլմիրա Վարդանյանը, Լիլիթ Ավետիսյանը, Մարիամ Զաքարյանը, Ռիտա Խալաթյանը, Սոնա Սարգսյանը և Վարդիթեր Վարդանյանը արտադրական նախադիպլոմային պրակտիկայի շրջանակներում այցելեցին ՀԱԳ: Պրակտիկանտներն այցելել են. 1. Անձեռնմխելի գրականության, 2. Արվեստի, 3. Գրականության հանրահռչակման, 4. Գրատպության թանգարան, 5. Թվայնացման և հրատարակման, 6. Համագործակցության և գրքափոխանակության, 7. Համալրման, 8. Հայերեն գրականության մշակման, 9. Հանրային կապերի, 10. Մատենագիտության և գրադարանագիտության, 11. Սպասարկման, 12. Տպագիր արտադրանքի վերականգնման, 13. Օտարալեզու գրակա-

նության մշակման բաժիններ։ Յուրաքանչյուր այցի ընթացքում ուսանող-պրակտիկանտները ծանոթացել են տվյալ բաժնի հիմնական գործառույթներին։ Պատրաստել են հետևյալ թեման՝ «Հայաստանի ազգային գրադարանը և միջմշակութային հաղորդակցությունը»։ Կազմել են գրականության ցանկեր։

2024 թ. մարտի 11-ից մինչև ապրիլի 22-ը ներառյալ՝ շաբաթական երեք անգամ պարբերականությամբ, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Լեզվաբանության և մանկավարժության ֆակուլտետի ռուս բանասիրության խմբի հեռակա 5-րդ կուրսի ուսանողներ Եվա Դադոյանը, Էրիկ Մելիքսեթյանը, Մաթիլդա Ավետիսյանը և Քրիստինա Մարգարյանն արտադրական նախադիպլոմային պրակտիկայի շրջանակում այցելել են ՀԱԳ։ Պրակտիկանտներն այցելել են. 1. Անձեռնմխելի գրականության, 2. Արվեստի, 3. Արտաքին կապերի, 4. Գրականության հանրահռչակման, 5. Գրատպության թանգարան, 6. Թվայնացման և հրատարակման, 7. Համագործակցության և գրքափոխանակության, 8. Համալրման, 9. Հայերեն գրականության մշակման, 10. Հանրային կապերի, 11. Հրատարակությունների ինդեքսավորման, 12. Մատենագիտության և գրադարանագիտության, 13. Սպասարկման, 14. Տեղեկատվական տեխնոլոգիաների, 15. Տպագիր արտադրանքի վերականգնման, 16. Օտարալեզու գրականության մշակման բաժիններ։ Յուրաքանչյուր այցի ընթացքում ուսանող-պրակտիկանտները ծանոթացել են տվյալ բաժնի հիմնական գործառույթներին։ Պատրաստել են հետևյալ թեման. «Հայաստանի ազգային գրադարան. ռուսերեն գրականությունը Հայաստանի ազգային գրադարանում»։ Կազմել են գրականության ցանկեր։ Ներկայացրել են նոր գաղափարներ և տեսակետներ։

Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջի պրակտիկանտը Հայաստանի ազգային գրադարանում

2024 թ. մայիսի 10-ից մինչև հունիսի 6-ը ներառյալ՝ շաբաթական երեք անգամ պարբերականությամբ, Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջի «Գրադարանային գործ» հեռակա բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի և բանաստեղծուհի Արևիկ Թերզյանը (Թերեզյան) նախաավարտական պրակտիկայի շրջանակներում այցելել է ՀԱԳ։ Այցելել է հետևյալ բաժինները. 1. Գլխավոր գրապահոց, 2. Գրատպության թանգարան, 3. Թվայանացում և հրատարակում, 4. Համալրում, 5. Հանրային կապեր, 6. Մատենագիտություն և գրադարանագիտություն, 7.Սպասարկում։ Ուսումնասիրել է հետևյալ թեմաները.

1. ՀԱԳ-ի առաքելությունը,
2. ՀԱԳ- Գրատպության թանգարանի դերն ու նշանակությունը,
3. Գրադարան-մասնաճյուղերի ղեկավարումը,
4. Գրադարանի կանոնադրության ուսումնասիրումը,
5. Գրադարանի ներքին աշխատանքային ժամանակացույցը,
6. Հիմնական տեխնիկական գործընթացները գրադարանում,
7. Գրադարանի աշխատանքային ծրագրի և հաշվետվության մշակումը,
8. Գրքային հավաքածուների համալրման աշխատանքները,
9. Հավաքածուի հաշվառման, մշակման, դասակարգման աշխատանքների կատարումը,
10. Տեղեկատու-մատենագիտական ապարատի կազմակերպման աշխատանքները (գրադարանային գրացուցակների և քարտարանների կազմումը),
11. Ծանոթացում գրապահոցի կառուցվածքային առանձնահատկություններին. հավաքածուի դասավորությանը,

12. Գրադարանում ընթերցողների գրանցման, սպասարկման աշխատանքների կատարումը, ընթերցանության ղեկավարումը,

13. Ընթերցողների սպասարկման աշխատանքի կատարումը բաժնույթներում և ընթեր-ցասրահում,

14. Տեղեկատու-որոնողական աշխատանքների իրականացումը տեղեկատու-մատենագիտական ապարատի և էլեկտրոնային սպասարկման միջոցով,

15. Էլեկտրոնային համահավաք գրացուցակի (KOHA) օգտագործում տեղեկատու-որոնողական և սպասարկման աշխատանքներում,

16. Տպագիր արտադրանքի թվայնացման աշխատանքները,

17. Զանգվածային միջոցառումների կազմակերպումըգրականության հանրահռչակման նպատակով,

18. Գրադարանի ամենօրյա աշխատանքների հաշվառումը։

Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջի պրակտկանտը Հայաստանի ազգային գրադարանում

Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջի «Գործավարություն օտար լեզուների խորացված իմացությամբ» բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Ալլա Վարդանյանը 2024 թ. մայիսի 15-ից մինչև հունիսի 25-ը ներառյալ՝ շաբաթական երեք անգամ պարբերականությամբ, պրակտիկայի շրջանակում այցելել է Հայաստանի ազգային գրադարան։ Ելնելով մասնագիտությունից՝ ծանոթացել է կոնկրետ աշխատանքների. ՀԱԳ անձնակազմին վերաբերվող տարաբնույթ փաստաթղթեր՝ աշխատանքային օրենսգիրք, աշխատանքային պայմանագիր, պաշտոնի փոփոխման համաձայնագիր, դիմում, զեկուցագիր, արձակուրդների տեսակներ, անաշխատունակության թերթիկ, գործուղում, բացատրագիր, պաշտոնի անձնագիր, աշխատաժամանակի տեղեկագիր և այլն։ Ծանոթացել է նաև գործավարությանն առնչվող տարատեսակ աշխատանքների ու փաստաթղթերի՝ ելից-մտից գրություններ, լիազորագիր, տեղեկանք և այլն, ինչպես նաև ՀԱԳ արխիվին, որտեղ պահպանվում են համապատասխան փաստաթղթեր։ Այցելել է նաև ՀԱԳ Գրատպության թանգարան։

Պրակտիկանտները ծանոթացել են ՀԱԳ-ի առաքելությանը։ Օրագրում գրառել են յուրաքանչյուր այցի ժամանակ ձեռք բերած գիտելիքները, հմտություններն ու կարողությունները։ Ցուցաբերել են մեծ հետաքրքրություն ՀԱԳ-ում իրականացվող տարաբնույթ աշխատանքների նկատմամբ։ ՀԱԳ-ի բաժինների վարիչները և համապատասխան աշխատողները պրակտիկանտներին են փոխանցել անհրաժեշտ տեղեկատվությունը։

Պրակտիկայի կազմակերպման կարևոր հանձնարարականներից է տեսական գիտելիքը գործնականում կիրառելու հրամայականը։ Հաշվի առնելով պրակտիկանտների մասնագիտական ուղղվածությունը՝ նրանք ծանոթացել են ՀԱԳ-ի համապատասխան գործառույթներին։ Ըստ անհրաժեշտության կազմված գրականության ցանկերը կարևոր են նաև պրակտիկանտների ավարտական աշխատանքների գիտական ապարատի տեսանկյունից։ Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանի 1-ին խմբի պրակտիկանտների պատրաստած «Հայաստանի ազգային գրադարանը և միջմշակութային հաղորդակցությունը» թեման բացահայտում է պրակտիկանտների պատկերացումը ՀԱԳ-ի առաքելության՝ նաև մշակութային ուղղվածության մասին։ Բազմաթիվ իրողություններից ներկայացնենք հետևյալը։ ՀԱԳ-ում պահպանվող հայերեն և բազմաթվ այլ օտար լեզուներով գրականությունը հնարավորություն է ընձեռում իրազեկվել նաև աշխարհի բազմաթիվ ժողովուրդների մշակութային առանձնահատկությունների և հարակից այլ հարցերի մասին։ Նույն ԲՈՒՀ-ի պրակտիկանտների 2-րդ խմբի պատրաստած «Հայաստանի ազգային գրադարան. ռուսերեն գրականությունը Հայաստանի ազգային գրադարանում» թեման ևս կարելի է դիտարկել միջմշակութային

երկխոսության համատեքստում, քանզի հայ և օտարազգի ընթերցողները ռուս գրականության միջոցով հաղորդկցվում են ռուսական մշակույթին։ Արդի ժամանակաշրջանի համաշխարհայնացման (գլոբալիզացիա) պայմաններում որպես կարևորագույն գործոն դիտարկվում ու արժևորվում է նաև մշակութային կամ առավել ընդգրկուն մակարդակի՝ քաղաքակրթությունների երկխոսության անհրաժեշտությունը՝ ազգային մշակույթների կենսունակ իրողությունները պահպանելու հույժ կարևոր հրամայականը հաշվի առնելով։

Լիահույս ենք, որ ՀԱԳ-տարբեր ուսումնական հաստատություններ փոխգործակցությունը կկրի շարունակական բնույթ նաև պրակտիկայի կազմակերպման տեսանկյունից։

SUMMARY

The purpose of present article is to introduce the programme of internship of students from different academic institutions. Interns of Valery Brusov State University, Vardges Amazaspian State College of Echmiadzin, Armenian-Greek State College of Tourism, Service and Food Industry of Yerevan completed an internship at the National Library of Armenia. From the point of view of practice, the following issues are also important: strengthening cooperation between academic institutions and National Library of Armenia, continuity of the theory-knowledge-practical application chain, consideration of theoretical, practical, methodological foundations of education-library relations, assessment, etc. The trainees got acquainted with the mission of the National Library of Armenia, the work of various departments and other related issues. They did their own assignments. We hope that the cooperation between the National Library of Armenia and academic institutions will be continuous.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Այվազյան Ա. Հիմնատարրեր՝ Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի, մասն առաջին, 2-րդ լրամշակված հրատ., Երևան, Լուսակն, 2004, 272 էջ։
2. Հայաստանի ազգային գրադարանի առաքելությունը, [Էլեկտրոնային աղբյուր] URL: https://nla.am/mission, 06.06.2024:
3. Հայեցակարգ Հայաստանի Հանրապետությունում ցկյանս ուսումնառության։ Հավելված ՀՀ կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 15-ի նիստի N 43 արձանագրային որոշման։ [Էլեկտրոնային աղբյուր] URL: https://www.irtek.am/views/act.aspx?aid=50751 06.06.2024: